ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ ԼՄՎՔ-ՊԸԱՇՁԲ-17/44>>

ք. Վանաձոր <<18>> <<ապրիլ>> 2017թ.

<<Վանաձորի համայնքապետարան>>-ը, ի դեմս Մամիկոն Ասլանյանի, որը գործում է << համայնքապետարանի >> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության վերականգնման>> աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <<2017թ. դեկտեմբերի 31-ը>>:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային

օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 7 950 000 (յոթ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներ

հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>	<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Ք. Վանաձոր, Տ. Մեծի 22	Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա
<<Կենտրոնական գանձապետարան>>	ՀՀ 2050222007241001
Հ/Հ 900232638024	ՀՎՀՀ 06907967
ՀՎՀՀ 06901936	Ինեկոբանկ ՓԲԸ
----------Մ. Ասլանյան	----------Մ. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
<< 18>> ապրիլ 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ ԼՄՎՔ-ՊԸԱՇՁԲ-17/44>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[3*]

<< ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ >> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Արժեքը (հազար դրամ)	
				Միավորի գին	Ամբողջը
1	2	3	4	5	6
•	*Իսահակյան 2-րդ նրբ.*				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.80	2.192	1.754
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.05	0.917	0.046
3.	բնահողի փոում տեղում	մ³	0.75	0.917	0.687
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.75	35.297	26.473
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16	տն	0.2562	82.017	21.013
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	35.00	2.765	96.773
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.0012	444.210	0.533
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.0013	317.585	0.426
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	14.00	0.738	10.330
	Ընդամենը				**158.033**
	Ռաֆֆու փողոց				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.80	2.192	1.754
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.05	0.917	0.046
3.	բնահողի փոում տեղում	մ³	0.75	0.917	0.687
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.75	35.297	26.473
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16	տն	0.256	82.017	21.013
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	35.00	2.765	96.773
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.0013	444.210	0.533
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.0013	317.585	0.426
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	14.00	0.738	10.330
	Ընդամենը				**158.049**
	Տավրոսի 4-րդ փողոց 1-ին նրբ.				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.16	2.192	0.351
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.01	0.917	0.009
3.	բնահողի փոում տեղում	մ³	0.15	0.917	0.137
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.15	35.297	5.295
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16	տն	0.0512	82.017	4.199
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	7.00	2.765	19.355
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.00025	444.210	0.111
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.00027	317.585	0.086
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	2.80	0.738	2.066
	Ընդամենը				**31.608**
	Մոսկովյան-Դեմիրճյան փողոց կապող նրբանցք				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.64	2.192	1.403
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.04	0.917	0.037
3.	բնահողի փոում տեղում	մ³	0.60	0.917	0.550
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.60	35.297	21.178
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16	տն	0.2050	82.017	16.813
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	28.00	2.765	77.418
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.001	444.210	0.444

8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.0011	317.585	0.349
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	11.20	0.738	8.264
	Ընդամենը				**126.457**
	Տավրոսի լեռնային փողոց.				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.16	2.192	0.351
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.01	0.917	0.009
3.	բնահողի փոռում տեղում	մ³	0.15	0.917	0.137
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.15	35.297	5.295
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16 հատ/	տն	0.0512	82.017	4.199
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	7.00	2.765	19.355
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.00025	444.210	0.111
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.00027	317.585	0.086
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	2.80	0.738	2.066
	Ընդամենը				**31.608**
	Տավրոսի 1-ին փողոց.				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.16	2.192	0.351
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.01	0.917	0.009
3.	բնահողի փոռում տեղում	մ³	0.15	0.917	0.137
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.15	35.297	5.295
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16 հատ/	տն	0.0512	82.017	4.199
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	7.00	2.765	19.355
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.00025	444.210	0.111
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.00027	317.585	0.086
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	2.80	0.738	2.066
	Ընդամենը				**31.608**
	Սեբաստիա փողոց				
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ³	0.32	2.192	0.701
2.	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.02	0.917	0.018
3.	բնահողի փոռում տեղում	մ³	0.30	0.917	0.275
4.	հենասյուների բետոնացում B7.5մ.բ.	մ³	0.30	35.297	10.589
5.	պողպատե հենասյան մոնտաժում /Φ102x3 L=8մ 16 հատ/	տն	0.1023	82.017	8.390
6.	մետաղական խողովակ Φ102x3	մ	14.00	2.765	38.709
7.	պողպատյա թիթեղ 4մմ հաստ.	տն	0.00079	444.210	0.351
8.	խարիսխ Φ12մմ L=0.3մ	տն	0.0005	317.585	0.159
9.	մետաղական հենասյուների յուղաներկում	մ³	5.60	0.738	4.132
	Ընդամենը				**63. 324**
•	***Իսահակյան 2-րդ նրբանցք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	5.00	9.706	48.529
2.	Լամպ 220V, 85W	հատ	5.00	2.450	12.250
3.	Բարձակ կոնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	5.00	12.828	64.138
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	5.00	0.467	2.333
5	Մեկուսիչ SΦ-16	հատ	5.00	0.834	4.172
6.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	11.00	0.184	2.019
7.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	182.00	0.709	129.012
8.	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	175.00	0.278	48.591
9.	Ամրակ մետաղաճոպանի	հատ	220.00	0.047	10.266
10.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	5.00	0.158	0.789
	Ընդամենը՝				**322.099**
•	***Ավետիսյան փողոց***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	3.00	9.706	29.117
2.	Լամպ 220V, 85W	հատ	3.00	2.450	7.350

3.	Բարձակ կրոնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	3.00	2.343	7.029
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	0.90	0.330	0.297
5	Մեխ 100	կգ	0.06	0.478	0.029
6.	Կեռ Ф16մմ L=0.25մ	հատ	3.00	0.467	1.400
7.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	3.00	0.834	2.503
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ^2 կտրվածքով	մ	7.00	0.184	1.285
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ^2	մ	110.00	0.709	77.974
10.	Պողպատե ճոպան Ф6.1մմ	մ	105.00	0.278	29.154
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	131.00	0.047	6.113
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ^2 կտրվածքով	մ	3.00	0.158	0.474
	Ընդամենը				**162.725**
•	***Պարույր Սևակի փողոց***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	4.00	9.706	38.823
2.	Լամպ 220V, 85W	հատ	4.00	2.450	9.800
3.	Բարձակ կրոնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	4.00	2.343	9.371
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	1.20	0.330	0.396
5	Մեխ 100	կգ	0.08	0.478	0.038
6.	Կեռ Ф16մմ L=0.25մ	հատ	4.00	0.467	1.867
7.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	4.00	0.834	3.337
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ^2 կտրվածքով	մ	9.00	0.184	1.652
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ^2	մ	115.00	0.709	81.519
10.	Պողպատե ճոպան Ф6.1մմ	մ	110.00	0.278	30.543
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	138.00	0.047	6.440
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ^2 կտրվածքով	մ	4.00	0.158	0.632
	Ընդամենը				**184.418**
•	***Սարոյան փողոց***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	6.00	9.706	58.234
2.	Լամպ 220V, 85W	հատ	6.00	2.450	14.700
3.	Բարձակ կրոնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	6.00	2.343	14.057
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	1.80	0.330	0.594
5	Մեխ 100	կգ	0.12	0.478	0.057
6.	Կեռ Ф16մմ L=0.25մ	հատ	6.00	0.467	2.800
7.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	6.00	0.834	5.006
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ^2 կտրվածքով	մ	14.00	0.184	2.570
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ^2	մ	182.00	0.709	129.012
10.	Պողպատե ճոպան Ф6.1մմ	մ	175.00	0.278	48.591
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	220.00	0.047	10.266
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ^2 կտրվածքով	մ	5.00	0.158	0.789
	Ընդամենը				**286.676**

•	***Մարտի 8-ի նրբ.***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	4.00	9.706	38.823
2.	Լամպ 220V, 85W	հատ	4.00	2.450	9.800
3.	Բարձակ կրոնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	4.00	2.343	9.371
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	1.20	0.330	0.396
5	Մեխ 100	կգ	0.08	0.478	0.038
6.	Կեռ Ф16մմ L=0.25մ	հատ	4.00	0.467	1.867
7.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	4.00	0.834	3.337
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ^2 կտրվածքով	մ	9.00	0.184	1.652
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ^2	մ	135.00	0.709	95.696
10.	Պողպատե ճոպան Ф6.1մմ	մ	130.00	0.278	36.096
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	163.00	0.047	7.666
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ^2 կտրվածքով	մ	4.00	0.158	0.632
	Ընդամենը				**205.374**
•	***Ռաֆֆու փողոց***				

1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	19.00	9.706	184.408
2.	Լամպ 220V, 85W	հատ	19.00	2.450	46.549
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	5.00	12.828	64.138
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	5.00	0.467	2.333
5	Մեկուսիչ SՖ-16	հատ	19.00	0.834	15.852
6.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	14.00	2.343	32.800
7.	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	4.20	0.330	1.387
8.	Մեխ 100	կգ	0.28	0.478	0.134
9.	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	14.00	0.467	6.533
10.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	42.00	0.184	7.709
11	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	593.00	0.826	489.535
12	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	570.00	0.278	158.266
13	Ամրակ մետաղաճոպանի	հատ	713.00	0.047	33.273
14	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	16.00	0.158	2.526
	Ընդամենը				**1045.443**
•	***Տավրոսի 4-րդ փողոց 1-ին նրբանցք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	9.00	9.706	87.351
2.	Լամպ 220V, 85W	հատ	9.00	2.450	22.050
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	1.00	12.828	12.828
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	1.00	0.467	0.467
5	Մեկուսիչ SՖ-16	հատ	5.00	0.834	7.509
6.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	8.00	2.343	18.743
7.	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	2.40	0.330	0.792
8.	Մեխ 100	կգ	0.16	0.478	0.077
9.	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	8.00	0.467	3.733
10.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	20.00	0.184	3.671
11	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	292.00	0.709	206.987
12	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	280.00	0.278	77.745
13	Ամրակ մետաղաճոպանի	հատ	350.00	16.333	16.333
14	Հաղորդալար ալյումինեՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	8.00	0.261	1.263
	Ընդամենը				**459.549**
•	***Տավրոսի 4-րդ փողոց 2-րդ նրբանցք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	12.00	9.706	116.468
2.	Լամպ 220V, 85W	հատ	12.00	2.450	29.399
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	12.00	4.00	28.114
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	3.60	0.330	1.189
5	Մեխ 100	կգ	0.20	0.478	0.115
6.	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	12.00	0.467	5.600
7.	Մեկուսիչ SՖ-16	հատ	12.00	0.834	10.012
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ² կտրվածքով	մ	27.00	0.184	4.956
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	422.00	0.709	348.370
10.	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	405.00	0.278	112.452
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	506.00	0.047	23.613
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	10.00	0.158	1.579
	Ընդամենը				**681.867**
•	***Մոսկովյան-Դեմիրճյան փողոցները կապող նրբանցք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	4.00	9.706	38.823
2.	Լամպ 220V, 85W	հատ	4.00	2.450	9.800
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	4.00	12.828	51.310

4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	4.00	0.467	1.857
5	Մեկուսիչ SՖ-16	հատ	4.00	0.834	3.337
6.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	9.00	0.184	1.652
7.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	146.00	0.709	103.493
8.	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	140.00	0.278	38.872
9.	Ամրակ մետաղաճոպանի	հատ	175.00	0.047	8.225
10.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	4.00	0.158	0.632
	Ընդամենը՝				
•	***Տավրոսի լեռնային փողոց.***				**258.001**
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	9.00	9.706	87.351
2.	Լամպ 220V, 85W	հատ	9.00	2.450	22.050
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	1.00	12.828	12.828
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	9.00	0.467	4.200
5	Մեկուսիչ SՖ-16	հատ	9.00	0.834	7.509
6.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	8.00	2.343	18.743
7.	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	2.40	0.330	0.792
8.	Մեխ 100	կգ	0.16	0.478	0.077
9.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	20.00	0.184	3.671
10.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	292.00	0.826	241.052
11	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	280.00	0.278	77.745
12	Ամրակ մետաղաճոպանի	հատ	350.00	0.047	16.450
13	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	8.00	0.158	1.263
	Ընդամենը				
	Տավրոսի 1-ին փողոց				**493.731**
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	7.00	9.706	67.947
2.	Լամպ 220V, 85W	հատ	7.00	2.450	17.150
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ /մետաղական հենասյան/	հատ	1.00	12.828	12.828
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	7.00	0.467	3.267
5	Մեկուսիչ SՖ-16	հատ	7.00	0.834	5.840
6.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	6.00	2.343	14.057
7.	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	1.80	0.330	0.594
8.	Մեխ 100	կգ	0.12	0.478	0.057
9.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	16.00	0.184	2.937
10.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	216.00	0.826	178.313
11	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	207.00	0.278	57.476
12	Ամրակ մետաղաճոպանի	հատ	259.00	0.047	12.086
13	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	6.00	0.158	0.947
	Ընդամենը				
•	***Տավրոսի 1-ին փողոց 1-ին նրբանցք***				**373.499**
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	10.00	9.706	97.057
2.	Լամպ 220V, 85W	հատ	10.00	2.450	24.499
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/փայտե հենասյան/	հատ	10.00	2.343	23.429
4	Պողպատ շերտավոր 25x4 L=0.3մ	մ	3.00	0.330	0.990

6.	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	10.00	0.467	4.667
7.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	10.00	0.834	8.343
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ² կտրվածքով	մ	22.00	0.184	4.038
9.	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x16 մմ²	մ	390.00	0.826	321.954
10.	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	375.00	0.278	104.123
11	Ամրակ մետաղաճոպանի	հատ	469.00	0.047	21.886
12	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	8.00	0.158	1.263
	Ընդամենը				**612.345**
•	***20-րդ դպրոցի հարակից տարածք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	1.00	9.706	9.706
2.	Լամպ 220V, 85W	հատ	1.00	2.450	2.450
3.	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	2.00	0.834	1.669
4	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5մմ² կտրվածքով	մ	2.20	0.184	0.404
5	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x10 մմ²	մ	55.00	0.709	38.987
6.	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	50.00	0.278	13.883
7.	Ամրակ մետաղաճոպանի	հատ	63.00	0.047	2.940
8.	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	2.00	0.158	0.316
	Ընդամենը				**70.355**
•	***Մեբաստիա***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	2.00	9.706	19.411
2.	Լամպ 220V, 85W	հատ	2.00	2.450	4.900
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ/մետաղական հենասյան/	հատ	3.00	12.828	25.655
4	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	1.00	0.467	0.933
5	Մեկուսիչ ՏՖ-16	հատ	0.25	0.834	2.503
6.	Անուր պողպատե անկյունակից L 50x50x5 երկարությունը 0.3մ	հատ	1.00	12.207	12.207
7.	Պողպատ շերտավոր 50x5 L=0.25մ	մ	0.25	0.901	0.225
8.	Հեղյուս M 12x40	կգ	0.42	1.128	0.474
9.	Մանեկ M12	կգ	0.04	1.128	0.045
10.	Տափողակ 12	կգ	0.2	1.128	0.023
11	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 2x2.5 մմ² կտրվածքով	մ	5.00	0.184	0.918
12	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x16 մմ²	մ	84.00	0.826	69.344
13	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	80.00	0.278	22.213
14	Ամրակ մետաղաճոպանի	հատ	100.00	0.047	4.667
15	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	2.00	0.158	0.316
	Ընդամենը				**163.834**
•	***18-րդ գիշերօթիկ դպրոցի հարակից տարածք***				
1.	Փողոցային լուսավորության կոնսոլային լուսատուների տեղադրում	հատ	4.00	9.706	38.823
2.	Լամպ 220V, 85W	հատ	4.00	2.450	9.800
3.	Բարձակ կոռնշտեյն պողպատե խողովակից T33x3մմ, L=1.3մ	հատ	4.00	4.692	18 770
4	Պողպատ շերտավոր 50x5 L=0.25մ	մ	4.00	0.901	3.603
5	Հեղյուս M 12x40	կգ	3.36	1.128	3.791
6.	Մանեկ M12	կգ	0.32	1.128	0.361
7.	Տափողակ 12	կգ	0.16	1.128	0.181
8.	Կեռ Φ16մմ L=0.25մ	հատ	8.00	0.467	3.733
9.	Մեկուսիչ ՏՖ 16	հատ	8.00	0.834	6.675
10.	Անուր պողպատե անկյունակից L50x50x5 երկարությունը 0.3մ	հատ	4.00	12.207	48.827
11	Պողպատ շերտավոր 50x5 L=0.25մ	մ	1.00	0.901	0.901
12	Հեղյուս M 12x40	կգ	1.68	1.128	1.895
13	Մանեկ M12	կգ	0.16	1.128	0.181
14	Տափողակ 12	կգ	0.08	1.128	0.090
15	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	9.00	0.184	1.652
16	Մալուխ ալյումինե ջիղերով ՊՎՔ 2x16 մմ²	մ	115.00	0.709	81.519
17	Պողպատե ճոպան Φ6.1մմ	մ	165.00	0.278	[illegible]

18	Ամրակ մետաղաձոպանի	հատ	206.00	0.047	9.613
19	Հաղորդալար ալյումինե ՊՎՔ 1x2.5 մմ² կտրվածքով	մ	4.00	0.158	0.633
	Ընդամենը				276 86
	Ամբողջը				6 197 46
	Վերադիր ծախսեր 13.3%				824 263
	Շահույթ 11%				772 390
	Չնախատեսված ծախս 2 %				155 882
	ԸՆԴԱՄԵՆԸ				7 950 00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>
Ք. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

----------Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 2
<< 18>> ապրիլ 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ ԼՄՎՔ-ՊՐԱՇՁԲ-17/44>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
<< ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ >>
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	<<Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության վերականգման աշխատանքներ>>	18.04.2017թ.	31.12.2017թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>
Քաղ. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Քաղ. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

----------Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 3
<< 18>> ապրիլ 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ ԼՄՎՔ-ՊԸԱՇՁԲ-17/44>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<<Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության վերականգման աշխատանքներ>>				1590000	2385000	3180000	3975000	4770000	5565000	6360000	7155000	7950000	7950000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>
Ք. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

----------Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 4
<< 18>>ապրիլ 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ Լ.ՄՎՔ-ՊՐԱՇՁԲ-17/44>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Քաղ. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

Պատվիրատու
<<Վանաձորի համայնքապետարան>>
Քաղ. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

< > < > 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Վանաձոր համայնքի փողոցների լուսավորության վերականգնման աշխատանքների ձեռքբերում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «ապրիլ» 2017թ.
Պայմանագրի համարը՝ *<< ՀՀ Լ.ՄՎՔ-ՊՐԱՇՁԲ-17/44>>*
Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Հայկ Հովսեփյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս Կ և Ա Մոնտաժշին ՓԲԸ-ի տնօրեն Ս. Հովհաննիսյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>
Քաղ. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Քաղ. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

----------Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
<< 18>>ապրիլ 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ ԼՄԿՔ-ՊԸԱՇՁԲ-17/44>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Վանաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

«Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2017թ. Ապրիլ 18 -ին կնքված N *ՀՀ ԼՄԿՔ-ՊԸԱՇՁԲ-17/44>>*

(Կապալառուի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Վանաձորի համայնքապետարան>>
Քաղ. Վանաձոր, Տ. Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
Հ/Հ 900232638024
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ
Քաղ. Վանաձոր, Վարդանանց 2ա
ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967
Ինեկոբանկ ՓԲԸ

----------Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն) Կ.Տ.